

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՀԱՄՕ ՍԱՀԵԱՆ ԵՒ ՖԵԴԵՐԱԿԱՆ ԳԱՐՍԻԱ ԼՈՐԿԱ

Համօ Սահեանի բուռն ու ստեղծարար գրական գործունեության մէջ կայ մի բնագաւառ, որ առաջին հայեացքից, կարծես թէ, այնքան էլ չի բնութագրում նրան, բայց հարցին ըստ էության մօտենալու դէպքում ի յայտ է գալիս Սահեանի նախասիրութիւնների մի ծանրակշիռ կողմը: Սահեանի թարգմանութիւնները՝ թէ՛ խօսքը մի լեզուից միւս լեզուով վերափոխելու սկզբունքներով, թէ՛ թարգմանուող նիւթի հոգեհարազատութեամբ, թէ՛ քանակով, թէ՛ որակով ու բազմազանութեամբ, արժանի են ուշադրութեան եւ գալիս են, որ իւրովի ներկայացնեն սահեանական աշխարհը:

Համօ Սահեանը թարգմանութեան ոլորտում ունի այնպիսի ստուարածաւալ աշխատանքներ, որոնք թարգմանչական գրականութեան ձեռքբերումներից են: «Հ. Սահեանը,- գրում է Դ. Գասպարեանը,- թարգմանութիւններ է արել ատրպէյճանական, բելառուսական, թուրքմէնական, էստոնական, իսպանական, պարսկական, ռուսական, վրացական, ուկրաինական, ֆրանսիական գրականութիւնից, Ասիայի եւ Աֆրիկայի բանաստեղծներից: Դրանց մեծ մասը լոյս է տեսել ինքնուրոյն ժողովածուներում, իսկ մի մասը՝ առանձին գրքերում: Այս բնագաւառին եւս Սահեանը կարեւորութիւն է տուել: Այսինքն՝ նա ստեղծագործական կապի մէջ էր թարգմանուող նիւթի հետ, եւ պատահական չէ որ ցանկանում էր հրատարակել իր թարգմանութիւնների մի առանձին ժողովածոյ»¹:

Գրողների համար թարգմանութիւնը կարող է դառնալ ստեղծագործութեան մի մաս: Համօ Սահեանը «Պոեզիան կ'օգնի մարդուն յօդուածում» խօսելով թարգմանութիւնների դերի մասին՝ նշել է. «Պարոյր Սեւակն ասում էր, թարգմանում եմ այն բանաստեղծութիւնները, որոնք ես պէտք է գրած լինէի, բայց ինձ նրանց հեղինակները կանխել են: Սեւակը ճիշդ էր այն առումով, որ սովորաբար թարգմանում ես քեզ մօտիկ ու հարազատ բանաստեղծներին: Թարգմանութիւնները դառնում են քո ստեղծագործութեան մի մասը: Եւ եթէ դու թարգմանում ես ասէնք, ռուս կամ իսպանացի բանաստեղծներին, եւ նրանք քո թարգմանութեան մէջ դառնում են մի քիչ հայ, նշանակում է դու՝ թարգմանիչդ էլ, դառնում ես մի քիչ ռուս, մի քիչ իսպանացի»²:

Համօ Սահեանը թարգմանել է Ալեքսանդր Պուշկինի, Սերգէյ Եսենինի, Արսէնի Տարկովսկու, Գարսիա Լորկայի եւ այլ բանաստեղծների գործերից: Ունի նաեւ նախասիրած օտար հեղինակներ:

«Ռուսներից նրան աւելի հոգեհարազատ է Սերգէյ Եսենինը: Մէկից աւելի անգամ Սահեանն այն միտքն է յայտնել, որ պոեզիայի ճանապարհը իրեն յուշել է Յովհ. Թումանեանը, իսկ բանալին տուել է Եսենինը: Հաւանաբար նա նկատի ունի նաեւ հայրենի գիւղից օտարանալու ողբերգութիւնը. «Երանի էր քեզ» բանաստեղծութեան մէջ նա նախանձում է Եսենինին, որ ընդամէնը մի քանի տարի առաջ էր հեռացել հայրական տնից, իսկ ինքը՝ շատ աւելի վաղուց: Բնորոշ է, որ Համօ Սահեանը թարգմանել է Եսենինին:

¹ Գասպարեան Դ., Համօ Սահեան: Կեանքը եւ ստեղծագործութիւնը, Երեւան, «Զանգակ-97», 2003, էջ 24:

² Սահեան Հ., Գրչի, խօսքի, խղճի կշիռը, Երեւան, «Ոսկան Երեւանցի», 2003, էջ 168:

Թարգմանութիւնը նոյնպէս աւանդները կամրջելու միջոց է: Եւրոպացի բանաստեղծներից Սահեանը թարգմանել է Ֆեդերիկո Գարսիա Լորկային: «Մեղրի երգը» վերնագրով ժողովածուն, որ լոյս է տեսել 1965 թ., դարձաւ իսպանացի բանաստեղծի հայերէն առաջին գիրքը: Նրան Սահեանը նաեւ նուիրել է առանձին բանաստեղծութիւն («Գարսիա Լորկա»), իսկ մի հարցազրոյցում խոստովանել է, որ Պաստեռնակի համեմատ նախընտրում է Լորկայի պոեզիան»³:

Նա մեծ էր, այո,
 Բոլոր մեծերին մերձ ու մերձաւոր,
 Դրա համար չեղաւ մեծաւոր,
 Աչքի փուշն եղաւ մեծաւորների:
 Եւ որովհետեւ
 Մեծաւորների աչքի փուշն եղաւ,
 Աչքի լոյսն եղաւ մերձաւորների:
 Մեծ էր եւ գիտէր, որ մեծապատիւ
 Մեծաւորները չեն ներում մեծին,
 Եւ մինչեւ անգամ
 Մահից յետոյ էլ չեն ներում մեծին,
 Այլ մեծանում են՝ մեծաւորական
 Պաշտանութիւնը պահելու համար
 Եւ նամանաւանդ հանգուցեալ մեծի
 Մերձաւորներին շահելու համար...
 Այսպէս է, աւաղ, քիչ է պարտահում
 Մեծաւորը՝ մեծ, մեծը՝ մեծաւոր...
 Մեծաւորները աշխարհից շահում,
 Մեծերն ապրում են աշխարհի շահով,
 Ցաւով աշխարհի:
 Դրա համար էլ մեծաւորների
 Շահին են բախում:
 Դրա համար էլ մահին են բախում:
 Դրա համար էլ (պարզ է ու մէկին)
 Մեծաւորները չեն ներում մեծին: (Հպ. 2, էջ 264)

Լորկային նուիրուած բանաստեղծութիւնից պարզ է դառնում, որ Սահեանը ծանօթ էր Ֆեդերիկո Գարսիա Լորկայի կեանքին ու ստեղծագործական աշխարհին, որովհետեւ Լորկան անձնական ու ստեղծագործական աշխարհում բազմաթիւ խնդիրների էր բախուել, եւ այդ ամէնը կարելոր դեր էր կատարել նրա ստեղծագործական աշխարհի ձեւաւորման գործում: Երկու գրողներ էլ անշափ զգայուն էին եւ անմիջապէս իրենց պոեզիայով անդրադառնում էին ժամանակի իրադարձութիւններին:

Թէ՛ Լորկայի, եւ թէ՛ Սահեանի բանաստեղծական ֆենոմենը խարսխուած է անձնաւորուած բնութեան ու մարդու փոխ-յարաբերութիւնների եւ փոխ-հարստացման վրայ:

³ Գրիգորեան Ս., Համօ Սահեան (Դասախօսութիւն), Տե՛ս http://ysu.am/files/Hamo_Sahyan_dasakhosutyun.pdf, էջ 5-6:

«Ես,- գրել է Սահեանը,- Լորկայի բանաստեղծությունները կարդալիս ընկնում էի հայերէնի այն ոլորտները, ուր ինձ ազատ էի զգում, հետեւաբար ես Լորկա չէի թարգմանում, ես ինձ էի թարգմանում»⁴:

Լորկայի գործերը թարգմանելու համար Սահեանը զգում էր թեմատիկ ընդհանրություններ: Լորկան «Մեղրի երգը» ժողովածոյի գործերում հիմնական ու խորհրդանշական կերպար էր ընտրել բնությունն ու բնութեան երեւոյթները: Ե՛ւ Լորկան, ե՛ւ Սահեանը իրենց ստեղծագործություններում կենդանացնում-շնչաւորում են բնութիւնը ու տալիս մարդկային կերպարանք: Առաջին հայեացքից բնութեան երեւոյթների առկայությունն ու յաճախ մարդկային յոյզներն ու ապրումները բնութեանը վերագրելը կարող է խօսել գրողների ինչ-որ թեմատիկ նմանութեան մասին, բայց «Մեղրի երգը» շարքում Լորկան բնութեան երեւոյթները, բոյսերն ու կենդանիները ներկայացնում է իր բնօրրանին ու բնաշխարհին մօտ ու յատուկ, իսկ Սահեանի ստեղծագործություններում ապրում ու շնչաւորում է սահանական աշխարհին բնորոշ բնութիւնը՝ լեռներն ու քարափները, մասրենին ու անտառը:

Բնութեան երեւոյթների, անշունչ առարկաների կենդանացումը եւ «հաւասարեցումը» մարդկային անհատականութեան ֆենոմեններին՝ կազմում են Լորկայի շատ գործերի աշխարհագրոգութեան հիմքը: Ծառերը, բոյսերը, քարերը, հողը, լուսինը խօսում են բանաստեղծի հետ եւ լսում նրա բարբառը⁵:

Լորկայի «Հասկեր» բանաստեղծությունը ներկայացնում է հասկի կենարար ու կենսատու լինելը, որ դեռ Աստուածաշնչից մարդու ճակատագրի մի մասն է եղել.

Յորենը դաշտում անձնապուր եղաւ

Մահուան շնորհին,

Մանգաղներն արդէն հասկերն են կտրում

Ջեփիւռն ու բարդին զրոյցի համար

Պարզ ու մրերիւմ խօսքեր են փնտռում:

Յորենն ուզում է խորին լռութիւն:

Նա, ամրանալով բորբ արեւի քակ,

Այն է քաշում այն լայնութեան համար,

Որտեղ ապրում են երազներն արթուն:

Իսկ օրը, օրը,

Որ յագեցել է ու հասունացել

Լոյս ու դողանջից,

Լուռ նահանջում է լեռները կապոյտ⁶:

Յորենը գիտակցում է իր դերի կարեւորությունը ու կարող է անձնատուր լինել մահուանը, որովհետեւ կենարարությունը շարունակուելու է իրենից յետոյ: Բնությունը ամբողջութեամբ կերպաւորուած է ստեղծագործութեան մէջ: Հասկը դաշտում մենակ չէր. կար լռութիւն, որ բառերից պերճախօս էր, ու միաժամանակ օրուայ աւարտին հասկը նկատում է, որ օրն էլ իր աւարտին նահանջում է դէպի կապոյտ լեռները.

⁴ Սահեան Հ., Գրչի, խօսքի, խղճի կշիռը, Երեւան, «Ոսկան Երեւանցի», 2003, էջ 196:

⁵ Գրիգորեան Ս., Պարոյր Սեւակը եւ համաշխարհային պոեզիան, Երեւան, «Արմա», 2018, էջ 232:

⁶ Ֆ. Գ. Լորկա, Մեղրի երգը, թարգ.՝ Հ. Սահեանի, Երեւան, «Հայաստան», 1965, էջ 5:

*Դուք անում էք, որ կերակրեք մարդկանց,
 Զարկածադիկն ու հիրիկը դաշտում
 Ծնում են ամեն ինչի հակառակ,
 Դուք-գերություն մեջ ոսկե մումիաներ:
 Քնի համար է լոյս աշխարհ գալիս
 Ծաղիկնանրառի: (Հտ. 2, էջ 69)*

Հասկերը ծնում են ամեն ինչին հակառակ ու յաղթահարում բնութեան տուած փորձությունները, որ իրենց հասունութեամբ դառնան նոր կեանքի շարունակություն:

*Մեռնել, որ ապրի կեանքը աշխարհում,
 Հասկեր, ահա ձեր ճակատագիրը⁷:*

Համո Սահեանն էլ հասկին օրհնաբանել ու նրան կենարարություն խորհրդանշել է համարել.

*Կանգնել էր դաշտում հասկը ցորենի
 Աստուածավայել իր շուկներով
 Իմ մեծությունն էր պանում՝ երբեմնի
 Աստուածաբնակ երկինքներն ի վեր
 Եւ աստուածային բեղիկներն ի վար
 Հողին ու քարին
 Օրհնություններ ու սարսուռ էր շաղում:
 Եւ աշխարհ եկայ,
 Երբ հին աստուածներն արդեն չկային (Հտ. 2, էջ 71):*

Ներկայանում է հասկի մենախօսությունը, որ պատմում է, թե ինչպես ու երբ աշխարհ եկաւ հասկը: Հասկը ծնուել էր ամեն ինչից առաջ ու օրհնաբանում էր այն հողին, որից սերել էր: Սահեանական աշխարհում բազմաթիւ անդրադարձներ կան հասկի ու ցորենի մասին, որ մեր շարունակություն ու ճակատագրի լուռ վկաներն են եւ պատահական չէ, որ Սահեանի համոզմամբ «էլի ցորենն է աշխարհի հիմքը»:

*Էլի ցորենն է աշխարհի հիմքը
 Փառք պանք ցորենին եւ օրհնաբաններ:
 Յորենի մահով մահը խափանենք,
 Մայրը՝ հողն է սուրբ, հայրը երկինքը,
 Հող դարձնենք քարը եւ ցորեն ցանենք:
 Էլի ցորենն է աշխարհի հիմքը,
 Փառք պանք ցորենին եւ օրհնաբաններ⁸:*

Հորկան նշում էր, որ հասկի ճակատագիրն է մեռնել, որ ապրի կեանքը աշխարհում, իսկ Սահեանը նշում է, որ ցորենի մահով կը խափանենք մահը: Երկու գրողներն էլ չնայած ապրել ու ստեղծագործել են տարբեր ժամանակներում եւ տարբեր իրականություններում, բայց կենարարություն խորհրդանշելու ու կեանքի շարունակությունը տեսել են մարկային գոյին անձնատուր եղած բնութեան եւ հասկի մեջ: Համո Սահեանի համոզմամբ հասկի կենարարությունը օրհնաբանել ու դեռ շարունակելու են

⁷ Ֆ. Գ. Լորկա, Մեղրի երգը, թարգ.՝ Հ. Սահեանի, Երեւան, «Հայաստան», 1965, էջ 6:

⁸ Սահեան Հ., Աստուած՝ ցորենին կ'ասեմ, Երեւան, «Զէյթուն», 1998, էջ 13:

օրհնաբանել տարբեր ազգեր ու ասքեր.

*Հասկը չի քնում, անքուն է հասկը,
Պաշտում եմ հասկի ուռած աչքերը:
Մարգարէներ են բոլոր հասկերը,
Հասկը չի քնում, անքուն է հասկը:
Օրհնաբանում են հասկի հրաշքը
Բոլոր ազգերի բոլոր ասքերը:
Հասկը չի քնում, անքուն է հասկը,
Պաշտում եմ հասկի ուռած աչքերը (Հր. 2, էջ 85):*

Հասկի աչքերը ուռած են հատիկի հասունութիւնից ու ծանրութիւնից, եւ պատահական չէ, որ Սահեանի համար պաշտելի են հասկի ուռած աչքերը:

«Միջանկեալ նշենք,- գրել է Դ. Գասպարեանը,- որ ուռած աչքերով այդ հասկը, մեռնելով աշխարհը պահող հասկը նաեւ իր իսկ՝ ստեղծագործ բանաստեղծի խորհրդաբանական պատկերն է»⁹:

Լորկան էլ «Հասկեր» բանաստեղծութեան մէջ նշել էր, որ հասկերը թռչել չեն կարողանալ, որովհետեւ ծանրացած են, ու կարծես գլխի մէջ կայ ուղեղը, որ ձուլուած է ոսկուց.

*Ծանր ու ծերացած հաւքերի նման
Հասկերը թռչել չեն կարողանում:
Նրանց ներդաշնակ գլուխների մէջ
Ուղեղ կայ, որը ձուլուած է ոսկուց:
Դիմագծերը խաղաղ են նրանց¹⁰:*

Բնութեան երեւոյթների քննութիւնը ե՛ւ Լորկայի, ե՛ւ Սահեանի ստեղծագործութիւններում առանցքային ու կարեւոր խորհրդանշ է: Գրողները իրենց ու մարդկութեանը յուզող շատ կարեւոր ու գաղափարական հարցերի կարող էին անդրադառնալ կերպաւորուած բնութեան միջոցով: Եթէ Համօ Սահեանի համար կերպաւորման խորհրդանշիչ պատկեր կարող էին դառնալ մասրենին, բարդին, ապա Լորկայի ստեղծագործութիւններում նկատելի են ձիթենու ու նարնջենու պատկերները: Այսինքն՝ գրողների համար կերպաւորման համակարգում կարեւորում է նաեւ այն տեղն ու բնաշխարհը, ուր ապրում ու ստեղծագործում են նրանք: Լորկայի «Չորացած նարնջենու երգը» բանաստեղծութեան մէջ տեսանելի են դառնում ծառի խոհերը, երբ արդէն ծերացել ու սաղարթից զրկուել է ծառը ու միայն երազներում է տեսնում իր կանաչ լինելը.

*Ոչ շնչում եմ արդէն,
Ոչ սօսափում եմ,
Հայելիների միջեւ
Ես դառնալում եմ¹¹:*

⁹ Գասպարեան Դ., Համօ Սահեան: Կեանք եւ ստեղծագործութիւնը, Երեւան, «Զանգակ-97», 2003, էջ 161:

¹⁰ Ֆ. Գ. Լորկա, Մեղրի երգը, Թարգ.՝ Հ. Սահեանի, Երեւան, «Հայաստան», 1965, էջ 5:

¹¹ Նոյն տեղում, էջ 9:

«Անձնաւորուած, մարդացած բնութիւն եւ բնական մարդ. ահա իմ հաւատոյ հանգանակը կեանքում եւ արուեստում»¹², - ասել է Հ. Սահեանը:

Լռութեան մոթիվի առկայութիւնը նկատելի է Սահեանի եւ Լորկայի պոեզիայում: Լռութիւնը բոլոր ձայների մէկտեղումն է: Գ. Լորկան լռութիւնը տեսնում է լեռների եւ կանչող արձագանքների տեսքով, իսկ Հ. Սահեանի պոեզիայում լռութիւնը դառնում է առաւել խօսուն:

Լսիր, ընկեր, լռութիւն:

Լռութիւնը

Լիքն է կանչով ալիքների

Եւ լեռների արձագանքով:

Լռութիւնը

Խոնարհել է

Դէմքը հողին¹³:

Լորկան լռութեանը անդրադարձել է նաեւ «Աւաղ» բանաստեղծութեան մէջ.

Ամէն ինչ խզուել է աշխարհում,

Ամէն ինչ լցուել է լռութեամբ¹⁴:

Այսինքն՝ մայր բնութեան մէջ լռութեան խորհուրդը բնութեան ձայների համատեղումն է: Սահեանական պոեզիայում եւս նկատելի է լռութեան մոթիվը «Ինձ բացակայ չդնեք» բանաստեղծութեան մէջ նրա լռութիւնը Լորկայի լեռների արձագանքի պէս զըրնգում է ձորով մէկ.

Ձեր լռութիւնը զնգում,

Ջրնգում է ձորով մէկ,

Ձեր լռութեան համերգում

Ինձ բացակայ չդնէք¹⁵:

Լորկայի «Դու սեւ բարդի» ստեղծագործութեան մէջ հեղինակը բարդուն նմանեցնում է մարդուն: Այսինքն՝ նորից հանդիպում ենք մարդ-ծառ խորհրդապատկերին.

Դու սեւ բարդի,

Քնքուշ բարդի,

Հագել ես դու

Ոսկի, ոսկի:

Երէկ էր դեռ, կանգնած էիր

Թռչունների աղմուկի մէջ,

Ծածկուած կանաչ տերեւներով,

Բարդի, բարդի:

Է, իսկ հիմա մէն ու մենակ,

Աշնան մռայլ երկնքի տակ,

Կանգնել ես դու ինձ պէս տխուր¹⁶:

¹² Սահեան Հ., Բանաստեղծը, մտածողը, մարդը, Երեւան, «Վան Արեան», 2001, էջ 249:

¹³ Ֆ. Գ. Լորկա, Մեղրի երգը, թարգ.՝ Հ. Սահեանի, Երեւան, «Հայաստան», 1965, էջ 10:

¹⁴ Նոյն տեղում, էջ 23:

¹⁵ Սահեան Հ., Ինձ բացակայ չդնէք, Երեւան, «Հայաստան», 2003, էջ 36:

¹⁶ Ֆ. Գ. Լորկա, Մեղրի երգը, թարգ.՝ Հ. Սահեանի, Երեւան, «Հայաստան», 1965, էջ 10

Բարդին ներկայանում է սեւ հագած ու կեանքի մայրամուտում: Լորկան նշում է, որ կարծես երէկ լինէր, երբ բարդին երիտասարդ էր ու կանգնած էր աղմուկի մէջ: Բարդին Լորկան էր, որի կեանքն անցել էր կարծես մի ակնթարթ: Բարդին արդէն կանգնած է մէն ու մենակ, իսկ աշնան մռայլ երկինքը ծերութիւնն է.

*Դու ծերունի, դու ճգնաւոր
Տխուր կանգնած կանաչ մարգում,
Բարդի, բարդի:
Ամէն ինչով քեզ ենք նման,
Ամէն ինչով:
Մենք էլ քեզ պէս,
Հագել ենք, տես,
Ոսկի... Ոսկի...*

Համօ Սահեանի պոեզիայում նոյնպէս հանդիպում ենք բարդու կերպարին: Սահեանի «Նաիրեան դալար բարդի» բանաստեղծութեան մէջ բարդին հագած է զմրուխտ կանաչ: Եթէ Լորկան ներկայացնում էր կեանքի մայրամուտն ապրող բարդուն, Սահեանի բարդին ներկայանում է դեռ նոր կանաչ հագած ու երիտասարդութեան շեմին.

*Նագում ես ու շորորում զմրուխտեայ քո շորերում,
Շուք արած ճամփի վրայ մանկույթեան կանաչ արտի,
Քո կանչը զնգում է զիլ իմ սրտի խոր ձորերում,
Իմ հեռու՛, հեռու՛ նաիրեան դալարբարդի: (Հպ. 1, էջ 67)*

Լորկայի պոեզիայում գերակշռող է մահուան եւ մենակութեան թեման, եւ սա պայմանաւորուած է նրան տանջող մահուան վախով: Մահուան թեման տեսանելի է հատկապէս «Հրաժեշտ» բանաստեղծութեան մէջ: Ողբերգականութիւնը նրա պոեզիայի չափումներից էր.

*Երբ որ ես մեռնեմ,
Բաց թողէք դռներն իմ պարզգամբի:
Ուրախ պարանիւն նարինջ է քաղում:
(Ես պարզգամբից տեսնում եմ նրան):
Հասկեր է կտրում հնձուորը ուրախ:
(Ես պարզգամբից լսում եմ նրան):
Երբ որ ես մեռնեմ,
Բաց թողէք դռներն իմ պարզգամբի¹⁷:*

Կեանքի յարատեւ լինելու գաղափարը շարունակում է, երբ նոյնիսկ մենք արդէն չենք լինի: Լորկան նշում է, որ բաց թողնեն պատշգամբի դռները, որպէսզի տեսնի կեանքի շարունակական լինելը, երբ հնձուորը էլի հասկեր կը քաղի, իսկ պատանին՝ նարինջ:

Սահեանական պոեզիայում եւս տեսանելի է կեանքի այն խոհափիլիսոփայութիւնը, որ կեանքը շարունակական է, ու անկախ մեր լինելութիւնից՝ կեանքի օրինաչափ ընթացքը շարունակում է: «Իմ մահով ոչինչ չի փոխուի կեանքում», սահեանական այս խօսքերը խօսուուն ապացոյցն են կեանքի յարատեւութեան.

¹⁷ **Ֆ. Գ. Լորկա**, Մեդրի երգը, թարգ.՝ Հ. Սահեանի, Երեւան, «Հայաստան», 1965, էջ 13

*Իմ մահով ոչինչ չի փոխուի կեանքում,
Ու չի պակասի աշխարհում ոչինչ,-
Մի լոյս կը մարի հինգերորդ յարկում,
Կը մթնեն մի պահ աչքերը քո ջիւնը:*

*Բայց հաւքերն էլի հարաւ կը չունեն,
Մանուկներն էլի կը խաղան բակում,
Կանաչներն էլի ցօղով կը թրջունեն,
Ծաղիկներն էլի կը շնչեն մարգում: (Հտ. 2, էջ 15)*

Նոյն միտքն էլ թեւածում էր Լորկայի պոեզիայում, որ աշխարհում ոչինչ չի պակասելու, ու կեանքը շարունակուելու է:

Լորկայի պատկեր-ստեղծագործութիւն-խոհափիլսոփայութիւն համաժիրի քննութեան ժամանակ հանդիպում ենք «Մոլորակ» բանաստեղծութեանը, որ բաղկացած է ընդամենը չորս բառից, բայց կրում է իր մէջ մի ողջ խորհրդապատկերային համակարգ.

*Սիրիուսի վրայ
Երեխաներ կան¹⁸:*

Համօ Սահեանի խոհերում ապրում են Լորկայի այս բառերը, ու նա հետաքրքրւում է, թէ ինչ եղան երեխաները: «Յիշում եմ՝ մի անգամ, երբ թարգմանում էր Լորկայի «Մեղրի երգը», «Մոլորակ» բանաստեղծութեան առիթով, որն ընդամենը չորս բառանոց մի փոքրիկ տող-պատկեր էր՝ «Սիրիուսի վրայ երեխաներ կան», Համօ Սահեանն ասաց. «Մտքիցս չեն գնում էդ երեխեքը. Տեսնես ի՞նչ եղան, ու՞ր կորան»¹⁹:

Համաշխարհային միջա-մտածողութեան մէջ լեռն ու ծառը համարում են տիեզերքի առանցքը, եւ ամէն ինչ, այդ թւում եւ մարդիկ, հաւաքւում են այդ գաղափարի շուրջ: Լեռն ու ծառը հանդիպում են Լորկայի պոեզիայում՝ «Չորս դեղին բալլադէ բանաստեղծութեան մէջ: Բանաստեղծութիւնը բացւում է լեռան գագաթին կանգնած կանաչ ծառի պատկերով.

*Լեռան գագաթին, լեռան գագաթին,
Կանաչ մի ծառ կայ լեռան գագաթին:
Հովիւն անցնում է
Իր ճանապարհով²⁰:*

Լորկայի ստեղծագործութիւններում յաճախակի հանդիպող ծառ-խորհրդանիշ է ձիթենին.

*Ձիթենիներն են հրում իրարու-
Դէպի շիկացած դաշտերը հեռու²¹:*

Ձիթենին դեռ շատ վաղուց համարուել է խաղաղութեան, յաղթանակի, ուրախութեան խորհրդանիշ, իսկ հրէական ու քրիստոնէական մշակոյթում այն խաղաղութեան, նաեւ յոյսի խորհրդանիշ է: Երկու գրողների ստեղծագործական աշխարհում գիւղն

¹⁸ Ֆ. Գ. Լորկա, Մեղրի երգը, Թարգ.՝ Հ. Սահեանի, Երեւան, «Հայաստան», 1965, էջ 22:

¹⁹ Մարտիրոսեան Ա., Ներկայում հանգրուանող անցեալ, Երեւան, «ՀԳՄ», 2010, էջ 71:

²⁰ Ֆ. Գ. Լորկա, Մեղրի երգը, Թարգ.՝ Հ. Սահեանի, Երեւան, «Հայաստան», 1965, էջ 48:

²¹ Նոյն տեղում:

ու գիւղական միջավայրը, բնաշխարհի գոյներն ու բոյրերը կարելոր ու վճռորոշ դեր ունեցան: Բնաշխարհի գոյների արտակարգ հարուստ բազմազանութեամբ են բնութագրուում Հ. Սահեանի եւ Լորկայի պոեզիան: Բանաստեղծները մի նոր հնչեղութիւն տուեցին հայրենի բնաշխարհների քնարերգութեանը՝ խօսքի ատաղձը դարձնելով բնօրրանի գոյներն ու աշխարհագրական տեղանքները: Հ. Սահեանը եւ Գ. Լորկան խօսեցին պոեզիայի դերի մասին: Լորկան իր «Սա նախերգանք է» բանաստեղծութեան մէջ խօսում է պոեզիայի ոգեղէն դերի մասին.

*Պոեզիան - դա կեանք է, որով
Քայլում ենք մենք տխրութեամբ,
Յուսալով, որ նաւավարը
Կը տանի մեր նաւն անշէկ²²:*

Պոեզիայի մասին տուած դիրքորոշումներից կարող ենք առանձնացնել նաեւ Հ. Սահեանի տեսլականը: «Պոեզիան իմ ամբողջ կեանքն է,- գրում է բանաստեղծը,- բայց ես չեմ կամենում բնորոշում տալ դրան: Չէի կամենայ կրկնել եղած բազմաթիւ բնորոշումները»²³:

Համօ Սահեանի ստեղծագործական աշխարհում կարելոր երեւոյթ էին թարգմանութիւնները, եւ առաւել երեւելի էր, երբ Սահեանը թարգմանեց Ֆեդերիկո Գարսիա Լորկայի «Մեղրի երգը» ժողովածոն: Բազմակողմանի եւ բեղմնաւոր է եղել Լորկայի ստեղծագործական կեանքը. նա մինչեւ իր կեանքի վերջին ժամերը աշխատել է լարուած ու պայքարել յանուն գաղափարի եւ ազատութեան:

Այսպիսով՝ Լորկան Համօ Սահեանին գրաւում էր ոչ միայն իբրեւ անհատ բանաստեղծ, այլեւ որպէս բանաստեղծական մշակոյթի կրող ու հիմնարար: Յիշատակուած ստեղծագործութիւններում Հ. Սահեանը եւ Գ. Լորկան իրենց բանաստեղծական շարունակ պահում են յաւիտենութեան խորհուրդը: Հ. Սահեանի եւ Գ. Լորկայի ընտրած բանաստեղծական բոլոր բառ-կառուցները նախնականի ու յաւերժականի գաղափարական խորհուրդն են մեկնում ու մէկտեղում:

ՈՌՁԱ ԳԱԼՍՏԵԱՆ

Երեւանի պետական համալսարանի Հայ բանասիրութեան ֆակուլտետի մագիստրոս



²² Նոյն տեղում, էջ 54:

²³ Մկրտչեան Լ., Զրոյցներ բանաստեղծի հետ, 1984, էջ 154: